ԱՐԵԳԱԿԻ ԲՌՆԿՈՒՄՆԵՐԸ

Արեգակի վրա տեղի են ունենում բռնկումներ՝ հզոր պայթյուններ, որոնց հետևանքով ազատվում է հսկայական քանակությամբ էներգիա՝ էլեկտրամագնիսական ալիքների և մասնիկների տեսքով: Վերջիններս հիմնականում էլեկտրոններ ու պրոտոններ են, որոնց արագությունները երկրագնդի մոտակայքում 250–500 կմ/վ են, և որոնց հաստատուն հոսքը կոչվում է **արեգակնային քամի**:

Սովորաբար Արեգակի ոչ մեծ բռնկումը տևում է 5–10 րոպե: Այդ ընթացքում արեգակնամերձ տարածություն է շպրտվում 10 միլիարդ տոննա իոնացված գազի ամպ, և անջատվում է հարյուր միլիոնավոր ջրածնային ռումբերի պայթյունին համարժեք էներգիա: Միայն ճառագայթման հետևանքով Արեգակն ամեն վայրկյան կորցնում է 4,3 միլիոն տոննա զանգված:

Արեգակնային բռնկումը մեկ շաբաթում ապահովում է ջերմության և լույսի այնպիսի քանակություն, որպիսին կարելի է ստանալ երկրագնդի ածխի, նավթի և բնական գազի առկա պաշարներից: